

ձրից մինչեւ ամենայն տիպի բանուորը մի նշանա-
բանի են ձգուում, բարեբեղ կեանքը այնպիսի
յայտարարութիւններով, որ քաղցրանայ բնակ-
չութեան անտանելի վիճակը: Թաթարական հոր-
դաների աւերածութիւնից, խալիֆաթի անսահ-
ման կեղեքումներից եւ ցար/զմի այլանդակու-
թիւններից աղատուած երիտասարդութիւնը
հսկայական քայլերով եւ հերոսական ջանքերով
տեսչում է աւերակները վերանորոգել եւ կեանքը
տանջանքներից փրկել: Խիստ բարդ եւ մեծ բեռ
է դրուած Հայաստանի աշխատակողների թի-
կունքին, դեռ նրանց սպառնում են աւելի ըն-
դարձակ եւ ծանր աշխատանքներ: Անհրաժեշտ
է կարգի բերել այն բազմաթիւ ջրանցքներն,
որոնք պեղուել են ոչ թէ Ուրարտական կամ
Մանայի ջրաններում, այլ աւելի վաղ, աւելի
կանուխ, Սոմմեր-Ակկադների ջրանում, որոնք
երկար ու ձիգ տարածուած են եղել լեռների
լանջերից մինչեւ դաշտերի ստորոտները եւ
գետերի ափուկքը: Այնպիսի ջրանցքներ, որոնք
չինուել յարգարուել են այն ժամանակները,
երբ շինում էին Եփրատի, Տիգրիսի եւ Տա-
րսի դաշտերում տարածուած բազմաթիւ
ջրանցքները: Բայց սրանց մասին ուրիշ անգամ:

15 Սևպտ. 1923,
Ալեքսանդրոպոլ:

ԱՏՐՊԵՏ



ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ՆԵՐՎԱՅԻՆ

Էջմիածնի միտան, բանասէր եւ հնագէտ
Գարեգին Եպիս. Յովսէփեանի, լեզուարան Գր.
Ղափանցեանի եւ նկարիչներ Արշակ Ֆէթվա-
ճեանի ու Վրթ. Արիկեանի հետ, 1917 թուի
Յուլիսին Էջմիածնից ճանապարհեցինք դէպի
Բագրատունեաց երբեմնի մայրաքաղաք, իսկ
այժմ աւերակ Անի, մի շարք ուսումնասիրու-
թիւններ կատարելու համար:

Գնացքը կանգնեց Անի կայարանում, որ-
տեղին մինչեւ քաղաքը եօթ վերստ է (եօթ
քիլոմէթր): Մեր իրերը մի սայլի վրայ դարսե-
լով կայարանից ճանապարհեցինք դէպի Անի:
Արեւածագից առաջ ճամբայ ընկանք. Ալա-
գիաղի զով հովը փչում էր Մանթաշի ձորերից:
Սիրտս լեցուած էր «հին հին դարուց յիշա-
տակ» ներով: Քանի յառաջ էինք գնում այն-

քան ես յուզւում էի: Մի բլուր եւս, եւ ահա
երեւում է Անին, իւր կիսակործան պարիսպնե-
րով, պալատներով եւ տաճարներով, որոնց ի
տես ուղեւորը յիշում է այն երգերը, որոնք
մեր ժողովուրդը ձօնել է իւր սիրելի Անին:

Իջանք Ախուրեան գետի ափը նստեցինք
նաւակը եւ դուրս եկանք Անիի պարիսպների
տակ, որտեղ նստել հին Շիրակի գիւղերի հայ
աշուղները եւ Անիի գովքերն էին ձայնագում,
ուղեւորներին եւ յուզելու եւ ոգեւորելու հա-
մար: Դեռ թարմ են յիշողութեանս մէջ կոյր
աշուղի տխուր երգի այս տողերը.

«Անի, Անի, ջան Անի,
Քանդողդ տունը քանդուի,
Մի ազգը, որ քեզ չը պահեց,
Մէկ լացողը իր լացովը ինչ անի...»

Ես առաջին անգամն էի տեսնում Անին,
ուստի եւ իմ վրայ վնասն աստիճանի սքանչելի
տպաւորութիւն թողին նախ՝ պարիսպները —
հսկայանիստ, ամրակուռ, բարձրաւազ եւ խոր-
հրդաւոր պարիսպները Անիի, որի ահագնեցիկ,
լուռ եւ ամայի տեսքը փշաքաղում են ականա-
տեսի մարմինը, Վրդէն մտել ենք քաղաքը,
ճամբու երկու կողմերի վրայ թափթուած քա-
րերը, որոնք սրբատաշ եւ ձեւաւոր են, համա-
րագրուած են: Զգում եմ, որ մի նոր, խնամող
ձեռք կայ այս աւերակների մէջ, որոնց ի տես
սիրտս ոչ թէ աւերակ է դռնում, այլ հպար-
տութեան, պարծանքի եւ յոյսի նոր կառու-
ցուածք է ստանում: Հասնում ենք Անիի մայր
եկեղեցու մօտ. հռչակաւոր կաթողիկէն կար-
ծես թուշել կուղէ դէպի վեր. նուրբ եւ բար-
ձրանայեաց կամարները գովական սլացք ունին:
Իջնում ենք Անի առաջնորդարանը, որտեղ մեզ
հիւրընկալում է 25 երկար տարի այս աւերակ-
ների վրայ իրրել պահպան նստած Միքայէլ
վարդապետը — մի զուարճախօս, բարի եւ ազնիւ
հայ հոգեւորական — որի ամբողջ ստացուածքը
մի աւետարան էր, մի ձեռնափայտ, մի գինու-
տիկ եւ բաժակ եւ հացի տոպրակ, որոնք նրա
խուցի ամայութիւնը կարծես զարգարում էին:

Իւր սովորութեան համաձայն այդ ամսուն
(1917) եւս այնտեղ էր եկել մեծանուն եւ վաս-
տակաւոր հայագէտ-գիտնական Պրոֆ.
Նիկ. Մսուր, իւր աշխատակիցներով: Անիի
հարաւակողմը, Միջնաբերդին մօտիկ շինուած
էր Պրոֆ. Մառի բնակարանը, Ախուրեանի քա-
րափի վրայ: Այն փողոցը, որ Պրոֆ. Մառի բնա-

կարանից երկարում է մինչև մայր եկեղեցին կոչում է «Մառի փողոց» մեծանուն պրոֆեսորի անունով:

Աւելի քան 25 տարի Պրոֆ. Մառը ինքիրեն նուիրել է Անիի ուսումնասիրութեան եւ պեղումներին, որոնք այնքան քաջալերուեցին երջանկայիշատակ խրիմեան Հայրիկի կողմից: Հայ պատմութիւնն ու գեղարուեստը միշտ էլ երախտապարտ պէտք է մնան Պրոֆ. Մառին, ի խնդիր այն անգնահատելի աշխատանքներին, որոնք կատարուել են Անիում: Մենք աւելորդ չենք համարում այստեղ մի թուուցիկ ակնարկ նետել Պրոֆ. Մառի կատարած մեծ գործի վրայ: Ամենից առաջ պէտք է շեշտել այն հանգամանքը, որ Պրոֆ. Մառը, որքան հայագէտ, նոյնքան էլ հայասէր մի անձ է, վերին աստիճանի կիրթ, բարի եւ վեհանձն, համեստ ու հմուտ մի մարդ, որ այնքան եռանդուն կերպով, աւելի քան 35 տարի, նուիրուել է հայագիտութեան: Անիի պեղումներն եւ ուսումնասիրութիւնները մենք պարտական ենք միայն Պրոֆ. Մառին, որը յաջող կերպով շարունակեց իւր երբեք չյոգնող աշխատութիւններն Անիում, մինչև 1917 թուի ամիսն վերջը: Ի՞նչ է կատարել Պրոֆ. Մառն Անիում:

Առաջին աչքառու երեւոյթն այն է, որ Անիի ամբողջ փողոցներն ու շէնքերը մաքրուած են քարակոյտերից եւ հողակոյտերից: Փլշելու վտանգին ենթակայ տաճարների վրայ կատարուած են նորոգութիւններ: Հողի տակից դուրս են բերուած մի շարք շինութիւններ, թէեւ կիսաւերակ, ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչը (Զուարթնոցի ծրագրով կառուցուած) որի մօտ գտնուել էր նաեւ Գագիկ Բագրատունի արքայի քարարձանը, որ Անիի թանգարանի գլխաւոր զարդն է: Պեղումների ընթացքին գտնուել են ջահեր, հողէ կանթեղներ, մոմակալներ, բուրվառներ, արտասուների փոքր ամաններ, փայտեայ եւ երկաթեայ եկեղեցական զանազան իրեր, արհեստաւորների գործիքներ, տնային առարկաներ, ամաններ, զէնքեր, նետ ու աղեղներ, մարդկային կմախքի մասեր: Ես տեսայ մարդու մի գանկ, որի մէջ խրուած էր նետը: Հաւանաբար զինուորի գանկ է, որին նետի հարուածը կպել է կամ Անին պաշտպանելիս եւ կամ Անիի վրայ յարձակուելու ժամանակ: Առանձնապէս ուշագրութեան արժանի են մանր մանր իրեր, որոնք ամբողջապէս պարզում են Անիի բնակչութեան կենցաղը: Անմոռաց կերպով ես յիշում եմ այն բոլորն որք Պրոֆ. Մառը մեզ առաջ-

նորդեց Անիի թանգարան-հնագարանը, որ Բագրատունեաց ժամանակ կաթուղիկոսարան է եղել, իսկ արարների տիրապետութեան օրով վերածուել է մզկիթի, որի կողքին այժմ բարձրանում է երկնասլաց մինարէթը, հիանալի կառուցուածքով: Երբ մտանք թանգարանը վաստակաւոր պրոֆեսորը Հայերէնով ասաց, «Գնանք նախ մեր ողջոյնն ու յարգանքը մատուցանենք Հայոց արքային», Եւ մեզ տարաւ Գագիկ Բագրատունու արձանի դիմաց: Մի պարթեւահասակ քարարձան է սա, Գագիկ Բագրատունին հագել է երկար եւ լայնաթեւ վերարկու, գլխին արաբական լայնափաթեթ չալման, որը բռնում է ուսերի լայնքը, վզից կախուած է մի խաչ, ձեռները բաց, բռնած է եղել իւր շինած Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մօտէլը: Այս հոյակապ արձանը տեսնելիս աչքիդ պատկերանում է Բագրատունի մեծազօր արքան:

Թանգարանում ամբողջ հնագիտական իրերը շարւած էին խնամքով, դասաւորուած, համարագրուած եւ մաքուր: Գարակներն ու պահարանները ապակեպատ եւ ապահով: Այս թանգարանից դուրս գալուց յետոյ Պրոֆ. Մառը մեզ առաջնորդում է արձանագրութեանց թանգարանը: Այստեղ խնամքով դասաւորուած են այն բոլոր արձանագրութիւններն ու տապանաքարերը, որոնք գտնուած են Անիում: Հայերէն, վրացերէն եւ արաբերէն արձանագրութիւններով ծածկուած զանազան չափի քարերը, պահուում էին շատ խնամքով:

Պրոֆ. Մառն իր աշխատակիցների հետ (հայ, ռուս, վրացի) ուսումնասիրել է Անիի պատմութիւնը, Բագրատունեաց ծաղկեալ շրջանի կենսքը, շէնքերի ճարտարապետութիւնը, առուեստն ու արհեստը, ժողովուրդի ներքին կենցաղը եւայլն: Եւ այս բոլորի լիակատար ուսումնասիրութիւնը գրեթէ կատարուել է շնորհիւ Պրոֆ. Մառի պեղումների եւ երկարատեւ ու յամառ աշխատանքի: Երկար կը լինէր մի առ մի թուել շարքը այն հրատարակութեանց — հայերէն, ռուսերէն եւ վրացերէն, որոնք կատարուել են Պրոֆ. Մառի եւ իր աշխատակիցների ձեռքով, Անիի մասին:

Անիի ճարտարապետական ուսումնասիրութեանց մէջ պատուաւոր տեղը մեր անուանի ճարտարապետ Թորոս Թորոմանեանին է յատկացուած: Ուսումնասիրելով Անիի շէնքերը նա եկել է այն եզրակացութեան, որ Թ—ԹԱՐ դարերի հայ ճարտարապետութիւնը զուտ հայկական է, տոհմիկ եւ հարազատ:

Այս դարերի ճարտարապետական կառուցուածքներում մենք չենք գտնում բիզանդական, արաբական կամ այլ ազդեցութիւններ: Թէեւ հայկական ճարտարապետութիւնը նմանութիւններ ունի բիզանդական, արաբական եւ պարսկական ճարտարապետութեանց հետ եւ նոյն իսկ զերծ չի մնացել նրանց ազդեցութիւնից, բայց հայկական ճարտարապետութեան ոճը բոլորովին ինքնուրոյն եւ անկախ է: Այս կարծիքին համաձայն է նաեւ մեր անուանի նկարիչ-ճարտարապետ Արշակ Գէթվաճեանը:

Անիի գիտական ուսումնասիրութեան հիմքը Պրոֆ. Մառն է դրել: Նրա կատարած պեղումներով յայտնագործուած հայ պատմութեան եւ գեղարուեստի վերաբերեալ նիւթերը ուսումնասիրուած են մասնագիտորէն: Այսպիսի աշխատանքներ են կատարել՝ Պրոֆ. Զովսէփ Օրբելին, Պրոֆ. Աշխարհ-Բէկ Բալանթարը, Պրոֆ. Անիսկին, Գարեգին Եպիս. Զովսէփեան, ճարտարապետ Թ. Թորոմանեան, Նկարիչ Արշ. Գէթվաճեան եւ ուրիշներ: Ամենից աւելի ինքը, Պրոֆ. Մառն է, որ բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ է հրատարակել Անիի մասին:

Այսպէս ահա մինչեւ 1917 թուի վերջերին Անին գտնուում էր Ռուսաց «կայսերական գիտութեան» ճեմաւանի, հսկողութեան ներքեւ, յանձին Պրոֆ. Մառի:

Սակայն մեծ պատերազմի աւերումներին ենթարկուեց նաեւ Անին:

1917 թուի դեկտեմբրից ռուսական զօրքերը լքելով Կովկասի ճակատը վերադարձան Ռուսաստան:

1918 թուի յունուարից սկսած Տաճկաստանը կազմակերպուած ոյժերով սկսեց յարձակում գործել Վանի եւ Էրզրումի ճակատների վրայ: Էրզրումն ընկաւ Փետրուարի՝ իսկ Վանն ընկաւ Մարտի վերջերին: Տաճիկները յառաջացան գրաւելով ոչ միայն Վանն ու Էրզրումը, այլեւ ամբողջ Կարսի շրջանը, Սուրմալուի գաւառը, Էջմիածնի գաւառի մեծ մասը եւ ի վերջոյ Անքսանդրապոլ քաղաքը եւ ամբողջ Շիրակի դաշտը:

Այսպիսով տաճիկները տէր դարձան նաեւ Անիին եւ մի վերջին անգամ էլ կարծես հաւուածեցին նրա արդէն իսկ վերաւոր սիրտը: Հայ աշխարհը մատնուել էր հուրի եւ սուրի. ո՞վ էր Անիի վրայ ուշագրութիւն դարձնողը: Սակայն պատիւ Պրոֆ. Մառի աշակերտ Պրոֆ. Աշխարհ-Բէկ Բալանթարին, որ այդ օրհասա-

կան օրերին անցել էր Անի եւ յաջողել էր թանգարանից Սանահնի վանքը փոխադրել Գագիկ Բագրատունու արձանի գլուխը եւ մի շարք արժէքաւոր իրեր: Ապրիլի վերջերին (1918 թ.) տաճիկ եւ գերմանացի սպաներն ու զօրքերը մտնում են Անի, կողոպտում են թանգարանի արժէքաւոր իրերը եւ այն ինչ որ հնարաւոր է լինում փոխադրել տանում են, իսկ մնացեալը տեղն ու տեղ ոչնչացնում են եւ հեռանում: Այնուհետեւ Անին մնում է այդպէս անտէր ենթակայ տաճիկ զինուորների եւ Կարսի շրջանի թուրք խուժանի աւերումներին, մինչեւ 1919 թուի գարնան երբ անգլիացիների կարգադրութեամբ Կարս քաղաքը իւր շրջաններով յանձնուեց Հայաստանի Հանրապետական կառավարութեանը, որի Հանրային Կրթութեան եւ Արուեստից նախարար Նիկոլ Աղբալեանը անմիջապէս մարդիկ ուղարկեց Անի հսկողութիւն կատարելու համար:

1920 թուի սկզբից, Հանրային Կրթութեան եւ Արուեստից նախարարութեան կից, Երեւանում կազմուեց «Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէ», որի նախագահն էր բանասէր-հնագէտ Գարեգին Եպիս. Զովսէփեանը, իսկ անդամներն էին Պրոֆ. ահագեմիկոս Ալեք. Թամանեանը՝ իբրեւ գեղարուեստագէտ-ճարտարապետ եւ Պրոֆ. Աշխարհ-Բէկ Բալանթարը՝ իբրեւ պատմաբան-հնախոյզ: Աշխատակիցներն էին ճարտարապետ Թ. Թորոմանեան, նկարիչներ Եղիշէ Թագէոսեան, Գարեգին Լեւոնեան, ճարտարապետներ Տէր Միքայէլեան եւ Գալկին (Ուուս) որը ծանօթ է հայ արուեստին:

Կոմիտէի նպատակն էր պահել Հայաստանի Հնութիւնները, որ չփճանան մարդկանց ձեռքով եւ կամ բնութեան աւերմունքին ենթակայ չլինին: Առանց Կոմիտէի գիտութեան Հայաստանում պեղումներ կատարելը արգելուած էր: Այն շէնքերը, որոնք հնագիտական արժէք են ներկայացնում, Կոմիտէն նրանց վրայ մեծ ուշադրութիւն էր դարձնում: Փլելու վտանգին ենթակայ շէնքերին ճարտարապետական օգնութիւն էր հասցնում: Հնագիտական արժէքաւոր իրերը գնում էին, նկարում եւ ուսումնասիրում՝ մասնագէտների կողմից, Հայաստանի ապագայ թանգարանին նիւթ ծառայելու համար:

«Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէ»-ն իր գործունէութեան առաջին կայանը Անին ընտրեց, նաեւ իբրեւ կենդրոն

հնագիտական աշխատանքների եւ ուսումնասիրութիւնների: Կոմիտէի ուսումնասիրութեան շրջաններն էին Անիի արեւմուտքը, Կարսի շրջանն ու արեւելակողմը, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի եւ Երեւանի ընդարձակ շրջանները, Արարատեան դաշտի որոշ մասերը եւ Գեղարքունեաց գաւառը: Կոմիտէն ձեռնարկել էր կազմել Հայաստանի հնագիտական քարտեզը, որի վրայ պիտի նշանակուէին ամէն մի հնավայրն ու պատմավայրը, որով եւ հիմք կը դրուէր մեր հայրենիքի սիստեմատիկ ուսումնասիրութեան: Որոշել էր իւրաքանչիւր շրջանում կազմել տեղական թանգարան-հնագարաններ եւայլն:

1920 թուի յուլիսից սկսած Կոմիտէն անցաւ գործի: Կազմուեց մի գիտական արշաւախումբ Պրոֆ. Թամանեանի եւ Պրոֆ. Աշխարհ-Բէկի ղեկավարութեամբ: Գիտական արշաւախումբը մեկնեց Անի, Հայաստանի Հանրապետութեան ցոյց տուած դրամական եւ փոխադրական միջոցներով: Աշխատանքները շուտով վերսկսուեցին Անիում:

Նոյն թուի Օգոստոսի 10ին, Հայաստանի Հանրապետական կառավարութեան պետական օրդան «Յառաջ, մեծ օրաթերթի խմբագրութիւնը առաջարկեց ինձ գնալ Անի եւ մի յօդուած գրել այն մասին թէ տաճիկները 1918 թուի արշաւանքից յետոյ ինչ է եղել Անիի թանգարանի վիճակը, ինչ աւերմունքներ են գործուել եւայլն: Խմբագրութիւնը հրահանգել էր նաեւ գիտել «Հայաստանի հնութեանց պահպանութեան Կոմիտէ»-ի աշխատանքները եւ հարկ եղածը տեղեկագրել:

Օգոստոսի 12ի առաւօտը որոշեցի ճանապարհուիլ դէպի Անի: Այդ նոյն օրը Անի էր մեկնում նաեւ յիշեալ Կոմիտէի նախագահ Գարեգին Լալիսկոպոսը: Էջմիածնից միասին ճանապարհուեցինք, եկանք կայարան եւ նոյն օրը հրեկոյեան հասանք Անիի կայարանը:

Իջանք Ախուրեանի ափը, նստեցինք նաւակը եւ դուրս եկանք Անի: Արտաքնապէս Անին նոյն էր: Մինակ, տխուր, մռայլ եւ միշտ սգաւոր Անին այս անգամ կարծես աւելի տխուր էր: Տաճիկները նրան հարածել էին ծանր կերպով: Աճապարում եմ տեսնել մայր եկեղեցին:

Այն աչքերիս, ես չուզեցի հաւատալ, որ մարդիկ այն աստիճան կարող են բարբարոս լինել, որ աւերակների վրայ փորձեն նոր աւերակներ յառաջացնել, որ մարդու վրէժը քարերից առնեն, որ գիտութեան այնքան թշնամի լինեն, որ

աշխատեն ամէն ինչ ոչնչացնել, խորտակել անդառնալի կերպով:

Երբ ես 1917 թուի ամրան առաջին անգամ մտայ Անի սրտի խորին յուզումով եւ հիացումով դիտում եւ ուսումնասիրում էի Բագրատունեաց մեծանուն մայրաքաղաքի հին աւերակները, սրանցից յայտնագործուած յիշատակները, Պրոֆ. Մառի հիմնած հնագարանը, նրա բնակարանն ու Միքայէլ Վրդ.ի առաջնորդարանը եւ մի քանի այլ հիւղակներ եւայլն: Իսկ երկու տարի յետոյ, 1920 թուի ամրան, ես խորին վրդովմունքով եւ վշտով ընցուած դիտեցի, ուսումնասիրողի զննող աչքերովս տեսայ այն աւերմունքներն ու վնասները, որ տաճիկները հասցրել էին Անիի վերաւոր եւ աւերակ սրտին:

Անին սիրող, Անին ուսումնասիրող, նկարող, քանդակող, բանասէր, հնախոյզ, ուղեւոր, ճարտարապետ հայ եւ օտար յարգելի անձեր, երեւակայութեան թուիչքներով ինձ հետ եկէք եւ տեսէք թէ ինչպէս են վարուել տաճիկները Անիի հետ:

Յմուելթիւնս ատենելուց յետոյ պտոյտի եմ եղնում հին աւերակների վրայ նոր աւերակները տեսնելու:

Ահա մայր եկեղեցին. տաճիկները հրացանի գնդակներով յատկապէս ոչնչացրել են արծիւների քանդակներն ու արձանագրութեանց որոշ մասերը: Մայր եկեղեցւոյ դէմն է առաջնորդարանը, որի պատերն իսկ կանգուն չեն. մի կատարեալ հողակոյտ է վերածուել: Անիի վանահայր Միքայէլ Վրդ.ը չկայ այնտեղ. նա թողել էր իւր 25 տարուայ բոլորը եւ Էջմիածին եկել, ուր եւ վախճանեց 1918 թուի Յուլիսին: «Մառի փողոցով յառաջանում եմ դէպի թանգարան-հնագարանը: Ներսում ոչինչ չեմ տեսնում. դարակներ եւ պահարաններ չկան. յատկի վրայ ցան ու ցիր թափուած են փշուած ու ջարդուած ամանները եւ հնագիտական այն բոլոր առարկաները, որոնք երկու տարի առաջ այս թանգարանն էին զարգարում, որոնք այնքան հրկարատեւ աշխատանքներով հողի տակից հանուել եւ գիտութեան սեփականութիւն էին դարձել: Գազիկ Բագրատունու արձանը չկայ, մեծ կարաններն ու զէնքերը չկան: Եւ այսպէս ամբողջ թանգարանը — Անիի անցեալ փառքն ու մեծութիւնը հաստատող այս յիշատակների ընդունարանը, դարձրել են ամայի, աւերակ եւ ոչնչութիւն: Պրոֆ. Մառի յամառ ու յարատեւ աշխատանքների այս լուռ վկան խորտակել ու հողին են հաւասարեցրել նրանք, «որոնց ոտքը

կոխած տեղը կանաչ չի բուսնում, Վեկտոր Հիւկոյի ասածի համաձայն:

Զըջում եմ թանգարանի բոլորտիքը, ամէն քայլափոխիս ոտքիս տակն են ընկնում փշուռած եւ ջարդուած թանկագին իրեր, որոնցից Բարբարոսները մեծ քանակութեամբ քարափից թափել էին Ախուրեանի ձորն ու գետը, հետքը կորցնելու համար: Եւրոպականում եմ ճանապարհս եւ հասնում եմ Պրոֆ. Մառի բնակարանին, որի պատերն անգամ քանդել եւ քարերը տարել են: Սրբատաշ, խաչանիշ, քանդակազարդ կարմիր ու սպիտակ քարերը, որոնք երբեմն տաճարների եւ պալատների զարդերն են եղել, այժմ քրդերի եւ թուրքերի գոմերի եւ կամ իրձիթների պատերն են կազմել:

Զեմ կարող մոռանալ այն տխուր ըրպէն, երբ ես մտայ Պրոֆ. Մառի բնակարանի աւերակներում, որոնց վրայ երկու տարի առաջ բարձրանում էին այն գեղեցիկ, պարզ ու կոկիկ սենեակները, որոնց խաղաղ ու լուռ յարկի տակ ապրում եւ աշխատում էին Պրոֆ. Մառն ու իր աշխատակիցները: Եւ այսպէս, որ կողմ չըջնցի միշտ հին աւերակների վրայ նոր աւերմունքներ եւ ոչնչացումներ տեսայ, այնքան, որ անզօր եմ թուել նրանց շարքը:

Հայի ճակատագիրը միշտ դառն ու սեւ է եղել. թուրք ու քիւրտը նոյն իսկ ուսուց տիրապետութեան օրով յաջողել էին Անիի կողքին մի փոքրիկ գիւղ հիմնել եւ ապրիլ Բագրատունեաց մայրաքաղաքի սրտում. այդ բանը հայերը չէին յաջողել կատարել, քաղաքական դաժան կարգերի պատճառով: Մտել եմ այս նոր Անին, թրքական այս փոքրիկ գիւղը, որի բնակիչները փառաշուք եւ մեծանուն մայրաքաղաքի անունը — Անի դրել են իրենց գիւղի վրայ, իրեն նախատինք ու ծաղը, հեգնանք եւ հարուած ոչ միայն հայութեան, այլ Անիի բարձրակառոյց պարիսպներին, որոնք իժէ մի օր փուլ գան հիմնայատակ պիտի կործանեն նաեւ այդ նոր Անին եւ իր անարգ բնակիչներին: Այդ գիւղում եմ այժմ եւ դիտում եմ նրանց բնակարանները, որոնց բակերում եւ դռան առջեւ կուտակուած են բազմաթիւ սրբատաշ քարեր: Այստեղ տեսնում եմ նաեւ խաչքարեր եւ արձանագրութիւններ ու տապանաքարեր, որոնց առաջին անգամ տեսել էի 1917 թուի ամրան արձանագրութեանց թանգարանում: Գնում եմ այստեղ նոյն աւերն ու ոչնչացումն է տիրում: Կանոնաւոր դասաւորութեամբ շարուած քարերն ու արձանագրութիւնները բո-

լոր խառնել, փշուր ու ոչնչացրել են կատարեալ քարակոյտ է ամեն ինչ. ականատեսը երբէք չի կարող երեւակայել, որ երկու տարի առաջ այստեղ մի տիպար թանգարան էր, յատկապէս արձանագրութիւնների եւ քանդակազարդ քարերի համար:

Կատարուած բարրարոսութեանց ի տես սիրտս մաշւում է, յոգնած եւ վշտահար գնում եմ այն խրճիթները, որոնց մութ եւ սեւ ու մռայլ յարկի տակ ապրում են «Հայաստանի Հնութեանց պահպանութեան Կոմիտէ»-ի անդամներն ու աշխատակիցները, որոնք եռանդուն կերպով աշխատում էին: Գարեգին Եպիսկոպոսն ու Պրոֆ. Աշխարհ-Բէկը կատարում էին հնագիտական եւ պատմական ուսումնասիրութիւնները: Պրոֆ. Թամանեանը եւ ճարտարապետ Թորմանեանը ճարտարապետական աշխատանքներով էին տարուած: Նկարիչները արտանկարում էին եկեղեցիների որմանրանկարները (Փրէսկոսներ) որոնք գաղափար են տալիս հայ հնագոյն նկարչական արուեստի զարգացման մասին: Այս աշխատանքը կատարում էին Մկրտիչ Մարգարեան եւ Ստեփան Թարխարեան նկարիչները, տէր եւ տիկին Տէջօեան ամուսինները եւ «Գեղարուեստ»-ի խմբագիր Գարեգին Լեւոնեանը՝ մեր յայտնի նկարիչ Եղիշէ Թադէոսեանի ղեկավարութեամբ: Քանդակագործական աշխատանքներն էլ կատարում էր մի լեհացի քանդակագործ:

Կոմիտէի անդամներն ու աշխատակիցները մեծ հաճոյքով կատարում էին իրենց վրայ դրուած պարտականութիւնները: Կենսամթերք եւ վարձատրութիւնը նրանց տրւում էր Հայաստանի կառավարութեան կողմից:

Այսպէս խաղաղ ու սիստեմատիկ աշխատանքներով ուսումնասիրւում էր Անին, որի պարիսպների գլխին Արագածից փչող հովերով ծածանում էր հայկական հանրապետութեան եռագոյն դրօշակը, որ այս հին ու նոր աւերակներում չըջող իւրաքանչիւր հայ սրտում արթնացնում էր Բագրատունեաց նախկին փառքը:

Կանգնել եմ պարսպի ներքեւ եւ գլխաւոր գիտում եմ այս ամրակառոյց բարձրութիւնը, Նստում եմ Կարսի դռան կողքին հանգչելու. աչքերս անթարթ ուղղում եմ այն առիւծին, որի քանդակի մէջքին կայ նաեւ խաչը:

Սա խորհրդանշանն է Անիի կրօնասէր եւ առիւծասիրտ հայ բնակիչներին: Մեծ պարսպադրան կողքի մի սպիտակ քարի վրայ նշմարում եմ տաճկերէնով գրուած հետեւեալ չորս տողը:

“Անի, Անի, ջան Անի,
Սէնի եափան ուսթա հանի,
Եափտի, եափտի՝ եափամատի,
Էքի կալտի բիր եանի...”

Այսինքն՝ “Անի, Անի ջան Անի, քեզ կա-
ռուցող (շինող) վարպետն ո՞ր է, որը շինեց,
շինեց, բայց չը շինեց (չըսացրեց) մէկ կողմը պա-
կաս մնաց”:

Ինչ դառն ու խորհրդաւոր հեգնանք գի-
տութեան եւ կուլտուրային ուղղուած: Ասել
ուզում են, որ “Անի, քեզ շինող վարպետը
չկարողացաւ այնպէս շինել, այնպէս կառուցել,
որ ոչ մէկ կողմը պակաս չմնար, երբ պակաս
մնաց մենք էլ ներս մտանք եւ այսպէս հարուա-
ծեցինք քեզ, ոչնչացրինք քո յիշատակներն ու
արժէքները”:

Վերջալոյս է. Անիի պարիսպների եւ աշ-
տարակների կատարները արեւի վերջին շողերով
լուսազարդուած են:

Լուծիւն, լուծիւն եւ անսահման, խո-
րին ու խորհրդաւոր խաղաղութիւնը գիշերուայ
հետ իջնում են հաղարումի եկեղեցիների քա-
ղաքի վրայ եւ խաւարը տարածւում է անթա-
փանցելի կերպով: Այնքան յիշատակալից այն-
քան անմոռաց են այդ գիշերները որ ես անց-
կացրի Անիում, որ մինչեւ այժմ էլ ամէն ան-
գամ հաճոյքով ու յուզումով եմ յիշում:

Օգոստոսի 20-ի արշալոյսին ես հրաժեշտ
տուի Անիին եւ “Հայաստանի Հնութեանց Պաշ-
պանութեան Կոմիտէի” անդամներին ու աշխա-
տակիցներին եւ վերադառնալով Էջմիածին, իմ
տպաւորութիւններն ու զեկուցումները հրա-
տարակեցի “Յառաջ” օրաթերթում (տես
1920 թ., թ. 205, 206, 207 եւ 208):

Սեպտեմբերի վերջերին Անիում իր աշ-
խատանքները վերջացնելուց յետոյ վերադար-
ձաւ նաեւ յիշեալ Կոմիտէին, իր ամբողջ կազմով:
Անիում մնացին միայն պահպանները:

1920 թուի Հոկտեմբերից հայ-տաճկա-
կան պատերազմին բնւ դարձաւ Կարսի շրջանը:
Շուտով տաճիկները գրաւեցին յիշեալ շրջանը
եւ Անին նորից անցաւ նրանց իշխանութեան
ներքը: Անին դարձեալ ենթարկուեց նորանոր
ոչնչացումների, որոնք անխնայ կերպով շա-
րունակւում են մինչեւ այժմ եւ ո՞վ գիտէ
մինչեւ երբ:

Քաղաքական աննպաստ պայմանների պատ-
ճառով Անին այժմ Հայաստանի կառավարու-
թեան ձեռքումը չէ:

Գալով “Հայաստանի Հնութեանց Պաշ-
պանութեան Կոմիտէին” նա իր ամբողջ կազմով,
նոր անդամներով եւ բազմաթիւ աշխատակից-
ներով շարունակում է իւր հնագիտական ու
սուսմասիրութիւններն ու պեղումները Հայաս-
տանի (Արարատեան աշխարհի) զանազան մասե-
րում, միշտ նոր ու արժէքաւոր նիւթեր մատա-
կարարելով հայ գեղարուեստին ու պատմու-
թեան:

Այս բոլորից յետոյ սակայն եթէ մի միս-
թարական երեւոյթ կայ, այդ այն է, որ Անին
Հայաստանի բոլոր պատմական ու հնագիտական
վայրերի մէջ, ամենից բախտաւորն է եղել, որ
գրեթէ լիակատար ուսումնասիրութեան է են-
թարկուել թէ հայ եւ թէ օտար գիտնական-
բանասէրների կողմից:

Այստեղ երկար կը լինէր թուել շարքը
հայ եւ օտար այն բոլոր ուղեւորների եւ գիտ-
նական-բանասէրների, որոնք 16-րդ դարու սկզբից
մինչեւ այժմ բազմատեսակ ուսումնասիրու-
թիւններ են կատարել Անիի մասին: Սակայն այս
բոլորի մէջ արձանանում է Պրոֆ. Մառը (իր
աշխատակիցներով) որ անգնահատելի ծառայու-
թիւն է մատուցել մեր գեղարուեստին եւ պատ-
մութեան, սիստեմատիկ, երկարատեւ (մօտ
25 տարի) եւ արժէքաւոր ուսումնասիրութեան
ենթարկելով Անին, որի մասին մեծանուն եւ
վաստակաւոր գիտնականն ասում է.

“Կովկասը հարուստ է հնագիտական եւ
պատմական բազմաթիւ վայրերով, որոնց թագն
ու պսակը Հայոց Բագրատունեաց մայրաքաղաք
Անին է”: Եթէ այս այսպէս է, ուրեմն Պրոֆ.
Մառն էլ այդ “թագ ու պսակ”ի գոհարներն
ու արժէքները, որոնք հողածածկ եւ անյայտ
էին, լոյս աշխարհը հանեց եւ գիտութեան ու
գեղարուեստին ընծայեց ի պատիւ եւ քաջալե-
րանք հայ ցեղին:

Թրակիզ, 18 Սեպտեմբերի 1923:

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ

